ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հուլիսի 20-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-1»*** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի նոյեմբերի 10-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի նոյեմբերի 30-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N « ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» նոյեմբեր 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Արհովշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-1»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.2. Պայմանագրի 1.3 կետում **«15 նոյեմբեր 2017 թ.»** բառերը փոխարինել **«30 նոյեմբեր 2017 թ.»** բառերով:

1.3. Պայմանագրի և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում **«15.11.2017թ.»** բառերը փոխարինել **«30.11.2017թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Արհովշին» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1 շենք, բն.14 հեռ.՝ 093 955 295 էլ. հասցեն՝ grigoryan.aramais@inbox.ru ՀՎՀՀ 00110978 հ/հ 1150007143333380 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ Ա. Գրիգորյան (ստորագրություն) Կ.Տ